



14:16 26/12/2014 » ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվել են Հայոց ցեղասպանության համար Թուրքիային պահանջներ ներկայացնելու իրավական հիմքերը

Այսօր տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պահանջներ ներկայացնելու միջազգային իրավական հենքերը» թեմայով համաժողովը և «Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը» խորագրով իրավական ուղեցույցի շնորհանդեսը: Այս մասին հայտնում է ՀԵՀ հասարակայնության հետ կապերի բաժինը:

Ծրագիրն իրականացրել է «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն» ՀԿ-ն՝ ՀՀ Նախագահի կողմից ընտրված գործընկեր կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած դրամաշնորհային մրցույթի շրջանակում:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել և ուղեցույցում ներկայացվել են Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հարցը և արարքի որակման խնդիրը, Թուրքիայի պատասխանատվության հնարավոր ձևերն ըստ միջազգային իրավունքի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հարցի բարձրացման հնարավոր տարբերակները և այլն:

Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի համահիմնադիր Վլադիմիր Վարդանյանը նշել է, որ Հայոց ցեղասպանության ոլորտում էնոցիոնալ հարթությունը պետք է դուրս բերվի, և դրա փոխարեն պետք է ավելի մանրամասն ու հստակ զբաղվել իրավական, իրավաբաղադրական խնդիրներով. «Այն փաստագրական նյութը, որ հավաքվել է երկար տարիների ընթացքում, այժմ ստանում է իրավական բովանդակություն: Իրավական հարթության վրա մենք ունենք բավականաչափ հնարավորություններ՝ ներկայացնելու համապատասխան պահանջներ տերբերատյաններում»:

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Մարուքյանը նկատել է, որ վերջին շրջանում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ բավականին մեծ ծավալի աշխատանք է կատարվում. «Մենք շատ ենք խոսում խնդիրն իրավական դաշտ տեղափոխելու մասին, և ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից հատկացվող դրամաշնորհների միջոցով իրականացվել են որոշակի աշխատանքներ: Մասնավորապես, «Օրենքի ուժով» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը կատարել է «Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատական ատյանին հայցով դիմելու հիմքերն ու հնարավորությունները» գիտական հետազոտությունը, ուսումնասիրություններ է իրականացրել Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնը: Կարծում եմ՝ այս

աշխատանքները կնպաստեն, որպեսզի իրավական հարթության վրա մենք ունենանք որոշակի փաթեթ, որը պատեհ առիթի, երբ հարցը հասունանա, կարողանանք ներկայացնել միջազգային դատական ատյաններին: Ըստ իս` միակ դատական ատյանը, որտեղ կարելի է հարցը բարձրացնել և հասնել հաջողության, ՄԱԿ-ի Միջազգային դատարանն է, և մեր հետազոտությունները հիմնականում խարսխված են այդ ուղղությամբ, որպեսզի այդ դատական ատյանի միջոցով հասնենք հաջողության: Ակնհայտ է, որ Թուրքիայի Հանրապետությունը կամավոր չի ցանկանում որևէ քայլ կատարել այդ ուղղությամբ, էրդողանի հայտարարությունները դրա վառ ապացույցն են»:

Արմեն Մարուքյանը նշել է նաև, որ Թուրքիայում մտայնություն կա, թե ներողությամբ կարող է ամեն ինչ ավարտվել:

«Մենք այդպես չենք կարծում, հակառակը` ներողությամբ ամեն ինչ սկսվում է, որովհետև հնարավոր չէ միլիոնավոր մարդկանց սպանել ու միայն ներողություն խնդրելով հարցը փակել: Խոսքը մի ամբողջ ժողովրդի ոչնչացման, նրա հայրենիքին տիրանալու, ունեզրկման մասին է, և բոլոր այս հետևանքները, որոնք առկա են Հայոց ցեղասպանության իրագործման առումով, առանձին քննարկման առարկա պետք է դառնան», -ասել է Արմեն Մարուքյանը:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանը կարևորել է այն փաստը, որ ճանաչման գործընթացից անցում ենք կատարում պահանջատիրության և իրավական հարթությունների ոլորտ:

«Հայաստանում Հայոց ցեղասպանության հարցի ուսումնասիրությանը լուրջ մոտեցում է ցուցաբերվում: Մենք սկսել ենք աշխատել նոր կադրեր պատրաստելու գործընթացի վրա, որի կարևոր շեշտադրումներից է հենց իրավաբանների խումբ պատրաստելը, որոնք ոչ միայն միջազգային իրավունքի տեսանկյունից պետք է ծանոթ լինեն Հայոց ցեղասպանության խնդիրներին, այլև տարբեր

շերտերում՝ պատմագիտություն, հոգեբանություն,
փիլիսոփայություն, պետք է հասկանան, թե ինչ է Հայոց
ցեղասպանությունը, որպեսզի տարաբնույթ հարցերի շուրջ
կարողանան հստակ պատկերացում կազմել: Այս առումով
այս համաժողովը և ուղեցույցի հրատարակումը բավականին
կարևոր են, քանի որ հիմք են հետագա աշխատանքների,
փաթեթների պատրաստման»,- ընդգծել է Մհեր
Հովհաննիսյանը:

Աղբյուր՝ Panorama.am